ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԻՐԱ ՊՈՂՈՍԻ

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մ.Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

մանկավարժական գիտությունների թեկնածու **Ռ.Կ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հոկտեմբերի 17-ին ժամը 14.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. սեպտեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ **Ա.Վ. ԱՎԱԳՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Կրթության կատարելագործման ցանկացած հիմնահարց կարող է ստանալ իր լիակատար ու ճիշտ լուծումը միայն մանկավարժական համակարգում, ներդպրոցական վերահսկողության էության և դերի պարզաբանման միջոցով, ցույց տալով, որ մանկավարժական գործընթացի արդյունավետությունը կախված է ոչ թե ներդպրոցական վերահսկողության առանձին սուբյեկտների անհատական գործունեությունից, այլ համակարգից, քանի որ մանկավարժական համակարգի շրջանակներում են իրականացվում կրթական գործընթացները, առանձնացվում կարևոր, իրար հաջորդող, իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող բաղադրամասերը, որոնք հանդիսանում են կրթության նպատակն ու բովանդակությունը, մանկավարժական գործընթացներով պայմանավորված խնդիրները իրականացնելու միջոցները և մանկավարժական գործունեության կազմակերպչական ձևերը, մանկավարժական գործունեությունը խթանող տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաները:

Այս ամենը ուղիղ ճանապարհի վրա է դրվում, ուսումնադաստիարակչական աշխատանքների որակն ու գործընթացի արդյունավետությունն ապահովում ներդպրոցական վերահսկողության միջոցով:

Ներդպրոցական վերահսկողությունը որպես մանկավարժական գործընթացի մեջ մտնող և վերահսկող սուբյեկտի կողմից իրականացվող գործառույթ կազմակերպվում և իրականացվում է հատուկ մշակված մանկավարժական համակարգով, որը ներառում է վերահսկողության բոլոր բաղադրամասերը, համապատասխանեցված կազմակերպվող, ղեկավարվող ու վերահսկվող գործընթացի էության ու բովանդակության, ելակետային դրույթների կիրառվող մեթոդական խմբերի, միջոցների, կազմակերպման ձևերի հետ:

Սակայն այսօր էլ դեռ հստակ ու կառուցողական ձևակերպում չունի կրթության ընդհանուր նպատակով թելադրված դպրոցին իջեցված սոցիալական պատվերը, այդ իմաստով էլ համակողմանի մարդ դաստիարակելու ամորֆ նպատակը կողմնորոշիչ դեր կատարելով ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացում, ոչինչ չի պարտադրում գիտելիքների հաղորդման կարողությունների, ունակությունների, հմտությունների ձևավորման և ներդպրոցական վերահսկողության իրականացման առումով, քանի որ ներդպրոցական վերահսկողության ժամանակակից համակարգը լիովին համապատասխանում է կրթության նպատակի ձևակերպմանը:

Արդի փուլում դպրոցի և կրթության զարգացման միտումներից ելնելով, ինչպես կրթական սուբյեկտներին ներկայացվող պահանջները, այնպես էլ դրանց վերահսկումը դառնում են հրատապ: Շեշտը դրվում է սովորողների մտավոր զարգացման, նրանց ընդունակությունների բացահայտման, դրանց խորացման ու զարգացման վրա: Այդ ընթացքում փոխվել են կրթության համակարգի կառավարման, ներդպրոցական վերահսկողության ելակետային շատ դրույթներ, այդ թվում կրթության մարդասիրացման, անհատի պահանջմունքներն ու դրդապատճառները, ստեղծագործական ակտիվությունը և ինքնուրույնությունը հաշվի առ-

նելու սկզբունքները, մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներում սուբ-յեկտների միջև միջանձնային հարաբերությունների էությունը, և համագործակ-ցությունը, նորամուծությունների ներդրման ծավալներն ու բովանդակությունը:

Մեր կողմից դպրոցի կառավարման և ներդպրոցական վերահսկողության հիմնախնդիրներին վերաբերվող գրականության (Վ.Վ.Կրաևսկի, Վ.Ս. Բիբլեր, Գ.Բ. Անանև, Ա.Ա. Բոդալյով, Ի.Ս. Բատրակովա, Մ.Մ. Պոտաշնիկ, Պ.Ի. Տրետյակով, Ս.Ա. Մովսիսյան, Լ.Թ. Ասատրյան, Ս.Մ. Խրիմյան, Ռ.Կ. Մուրադյան) վերլուծությունը ցույց տվեց, որ տեսականորեն առկա են գիտական և մեթոդական նախադրյալ-ները դպրոցական համակարգի կառավարման և ներդպրոցական վերահսկո-ղության կատարելագործման ուղղությամբ: Ինչ խոսք այդ ամենը դեռևս կրկին փորձարարական ստուգման կարիք են զգում: Բայց անհրաժեշտություն է զգացվում նախ հաղթահարել դեռևս որոշ չափով պահպանվող ավանդական մանկավարժությունից ժառանգություն ստացած ոչ օգտակար սկզբունքները, մեթոդները, միջոցները, վերահսկողության ձևերն ու ոճերը: Դրանք են՝

- **վերահսկման ավտորիտար ոճը**, որտեղ վերահսկողի որոշումները պար-տադրում են վերահսկվող սուբյեկտներին ենթարկվել դրանց և անվերապահորեն, առանց առարկելու կատարել:
- **ուսուցչի իշխող խոսքը**, որը վերջնական է, անկախ այդ խոսքի կամ մտքի գիտական, կամ տրամաբանական լինելուց,
- կրթության եվրոպական կառույցներին դժվարությամբ ինտեգրումը:

Այս ամենը ազդում է ներդպրոցական վերահսկողության կատարելագործման վրա և այն հետ պահում հանակրթական դպրոցի բարեփոխումներից: Այս առումով էլ հրատապություն է ձեռք բերում մանկավարժական գործընթացի, ներ-դպրոցական վերահսկողության սուբյեկտների՝ վերահսկողների ու վերահսկվող-ների՝ ստեղծագործական համագործակցության իրականացումը այդ գործըն-թացի արդյունավետության բարձրացման և ներդպրոցական վերահսկողության կատարելագործման նոր ու արդյունավետ ուղիների ու միջոցների ներդրման միջոցով: Ներդպրոցական վերահսկողության կատարելագործման նոր ուղիների ու միջոցների հայտնաբերումը, ձևավորումն ու զարգացումը, արդյունավետ ու նպատակահարմար կիրառումն էլ հիմք է ծառայել մեր գիտական հետազոտու-թյան թեմայի ընտրության համար և ապահովել ու պայմանավորել հետազոտու-թյան արդիականությունը:

Հետազոտության նպատակը ներդպրոցական վերահսկողության կատարե-լագործման ուղիների ու միջոցների հայտնաբերումը, ձևավորումը, զարգացումը և հանրակրթական դպրոցում դրանց արդյունավետ ու նպատակահարմար կիրա-ռումն է:

Հետազոտության օբյեկտը ներդպրոցական վերահսկողության կատարելա-գործման ուղիների ու միջոցների համակարգն է:

Հետազոտության առարկան ներդպրոցական վերահսկողության ուղիների ու միջոցների կատարելագործման գործընթացն է:

Հետազոտության գիտական վարկածը: Հանրակրթական դպրոցի բարեփո-խումների արդի փուլում ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների ձևավորումն ու զարգացումը կլինի արդյունավետ ու

նպատակային, եթե ժամանակի պահանջներից ելնելով՝

- վերամշակվեն ներդպրոցական վերահսկողության կատարելագործման կառավարման ոճերը և հստակեցվեն խնդիրները,
- ներդպրոցական վերահսկողության առանձին բաղադրամասերը դիտարկվեն որպես ներդպրոցական վերահսկողության համակարգ,
- առանձնացվեն ներդպրոցական վերահսկողության սուբյեկտների հիմնական գործառույթները, կադրերի ընտրության, նրանց որակավորման բարձրացման և սովորողների գիտելիքների որակի վերահսկման ուղղությամբ:

Հետազոտության խնդիրները:

- Հստակեցնել ներդպրոցական վերահսկողության սուբյեկտների գործառույթները, դրանք ծառայեցնելով սովորողների գիտելիքների որակի վերահսկմանը:
- Տեղայնացնել դպրոցի կառավարման և ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղղությամբ արտերկրի մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել դպրոցական պրակտիկայում:
- Վերամշակել ու կատարելագործել ներդպրոցական վերահսկողության ուղիների ու միջոցների գործող համակարգը:
- Բացահայտել ներդպրոցական վերահսկողության արդյունավետությունն ապահովող և պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները կրթական համակարգի ժողովրդավարացման ու հումանացման պայմաններում և հանրակրթության բարեփոխումների գործընթացում:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել մանկավարժական գիտությունների համակարգի զարգացման ու փոփոխման, կրթության կառավարման, ներդպրոցական վերահսկողության կատարելագործման մասին փիլիսոփայական գիտության տվյալները, հոգեբանական գիտության կիրառական նվաճումները, մանկավարժական գիտությունների նորամուծությունները՝ ինովացիաների հոսքը մանկավարժական գործընթաց՝ դպրոցի կառավարման գծով՝ «Ներդպրոցական կառավարման հիմունքները», «Ներդպրոցական կառավարման տեսության ու պրակտիկայի հարցեր», «Մենեջմենթը ներդպրոցական վերահսկողության մեջ», «Կառավարման ու վերահսկողության հոգեբանական հիմունքները», «Դպրոցի կառավարման տեսությունն ու պրակտիկան» վերտառություններով Պ.Վ. Խուդոմինսկու, Տ.Ի. Շամովայի, Յու.Ա. Կոնարժևսկու, Բ.Մ. Ռեբուսի, Վ.Ս. Լազարևի, Մ.Մ. Պոտաշնիկի, Ս.Ա. Մովսիսյանի, Մ.Մ. Մանուկյանի, Ա.Օ. Թոփուզյանի, Լ.Թ. Ասատրյանի, Ս.Մ. Խրիմյանի, Ռ.Կ. Մուրադյանի և այլոց աշխատությունները, նվիրված դպրոցի գիտական կառավարմանը, նրա գործունեության վերահսկմանը և օբյեկտիվ գնահատմանը, ներդպրոցական վերահսկողության նկատմամբ համակարգային մոտեցմանը, վերահսկողության ժողովրդավարացմանը և հումանացմանը:

Հետազոտության մեթոդները. ատենախոսության առաջադիր խնդիրների լուծման նպատակով կիրառվել են ինչպես առանձին մեթոդներ, այնպես էլ մեթոդական խմբեր: **Առանձնացվել են.**

- հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժության **գրականության տեսական վերլուծության և**

- **էմպիրիկ հետազոտության և կոնկրետ, միջնորդավորված մեթոդները,** այդ թվում՝

ա) **դիտումը**, որը հնարավորություն է տվել կուտակել անհրաժեշտ փաստեր, տվյալներ ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների որոնման հարցում,

բ) **նորմատիվ և դպրոցական փաստաթղթերի ուսումնասիրությունը**, որը հնարավորություն է տվել ներդպրոցական վերահսկողության գծով հանրապետության մի շարք դպրոցներում հետազոտել ու պարզել այդ ուղղությամբ իրականացվող արմատավորված աշխատանքի ոճերը,

գ) **անկետավորումը**, որը հարցումների միջոցով մեզ օգնեց գտնել ներդպրոցական վերահսկողության կատարելագործման նոր ուղիներ ու միջոցներ, ընդօրինակել և տեղայնացնելով ներդնել մանկավարժական առաջավոր փորձ,

դ) **մանկավարժական գիտափորձը**, որը մշակվել ու իրականացվել է այնպես, որ հնարավոր է դարձնել ներդպրոցական վերահսկողության զարգացման դինամիկան, նրա կատարելագործման արդյունավետ ուղիների ու միջոցների հայտնաբերումն ու կիրառումը,

ե) **հարցազրույցը**, որը կիրառվել է հանրակրթական միջնակարգ դպրոցների ներդպրոցական վերահսկողության սուբյեկտների՝ վերահսկողների և վերահսկվողների շրջանում ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների գծով տեսակետները պարզելու և կարծիքները վերլուծելու նպատակով:

- **Տեսական հետազոտության և մանկավարժական փորձի վերլուծման ու ընդհանրացման մեթոդները,** այդ թվում՝ մանկավարժական երևույթների միջև եղած օբյեկտիվ կապերի բացահայտումը, սոցիոլոգիական հետազոտությունները, դպրոցի գործունեության հաշվետվությունների ուսումնասիրությունները:

Հետազոտությունն անցկացվել է երեք փուլերով:

Առաջին փուլում (2005-2007թթ.) կատարվել է ներդպրոցական վերահսկողության գծով հանրապետության դպրոցական առաջավոր փորձի ուսումնասիրություն, վերլուծություն, փաստացի նյութերի հավաքում, թեմայի ուսումնասիրության ծրագրի շրջանակներում գիտական աղբյուրների առանձնացում:

Երկրորդ փուլում (2007-2009թթ.) որոշակիացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական վարկածը, որի ճշմարտացիության ստուգման նպատակով անցկացվել են գիտափորձեր ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների որոնման, հայտնաբերման, հաստատման և ներդնման ուղղությամբ:

Երրորդ փուլում (2009-2010թթ.) հետազոտական աշխատանքներին զուգահեռ գրել և հրատարակել ենք հիմնախնդրին նվիրված և ատենախոսության բովանդակությունն արտացոլող հոդվածներ, շարադրել ենք հետազոտությունը:

Հետազոտության գիտական նորույթը:

- Ներդպրոցական վերահսկողությունը մեր հետազոտությունների և վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների որոնման

արդյունքում սահմանվել է որպես մշտական կատարելագործման մեջ գտնվող ինքնուրույն գիտական մանկավարժական շարժուն համակարգ:

- Կանոնակարգվել են ներդպրոցական վերահսկողության գլխավոր սուբյեկտի՝ դպրոցի տնօրենի վերահսկողության ձևերն ու բովանդակությունը, դասալսումների, որպես վերահսկողության ինքնատիպ ու ստեղծագործական ձևի, որպես ուսուցչի սոցիալական դերի և որպես վարչարար՝ սոցիալական կարգավիճակի, որպես մարդ ու մանկավարժ՝ անձնային ու մասնագիտական որակների ներդաշնակման միջոցով, որոնք օգնել են բարձրացնել ուսուցչի մանկավարժական մշակույթը, հաղորդակցման և խոսքի մանկավարժական տեխնիկան և վարպետությունը:
- Սահմանվել և առանձնացվել են ներդպրոցական վերահսկողության գործառույթները, կատարելագործման արդյունավետության պայմանները, բնութագրվել են դրանց առանձնահատկությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ ուսումնասիրության հիմնահարցի նկատմամբ ամբողջական, համակարգային-կառուցվածքային, գործունային և անձնային մոտեցումները հիմք են ստեղծում.

- ներդպրոցական վերահսկողությունը դիտարկել որպես կառավարման համակարգի կարևորագույն գործառույթ,
- բացահայտել և նորովի մեկնաբանել ներդպրոցական վերահսկողության դերը դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

Հետազոտության գործնական նշանակությունը այն է, որ ատենախոսության մեջ մշակված ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների համակարգը փորձարկվել ու ներդրվել է Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 2, Ղ. Աղայանի անվան թիվ 63, Գյուլբենկյանի անվան թիվ 190, Վանաձորի Գ. Չաուշի անվան թիվ 24 և Եղեգնաձորի «Գիտելիք» համալսարանին կից ավագ դպրոցներում:

Հետազոտության իրական գործնական արդյունքն ու նշանակությունը նաև այն է, որ մեր եզրահանգումներն ու մեթոդական հանձնարարականները ուղղվել են ներդպրոցական վերահսկողության կատարելագործման նկատմամբ ձևական մոտեցման հաղթահարմանը, դպրոցի ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ներդպրոցական վերահսկողության գործառույթների ընդլայնմանը:

Հետազոտության արդյունքները թույլ են տվել բացահայտել ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների նկատմամբ նորովի, հանրակրթական դպրոցի բարեփոխումների և ներդպրոցական վերահսկողության կատարելագործման միտումներից բխեցված մոտեցումներ, որոնք ավանդական ուսուցման պայմաններում չէին կարող օգտագործվել:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովվում է աշխատանքի գիտական մեթոդաբանությամբ, առաջադիր հիմնախնդրի ուսումնասիրության նպատակով, կիրառման ամբողջական, համակարգային-կառուցվածքային, գործունային, անձնային մոտեցումներով, մանկավարժական փորձի արդյունքների վերլուծության արդյունքներով, տեսական և էմպիրիկ հետազո-

տության այնպիսի մեթոդների և մեթոդական խմբերի կիրառմամբ, որոնք համապատասխանում են ուսումնասիրության առարկային, նպատակին, խնդիրներին և տրամաբանությանը: Հետազոտության հիմնավորվածությունն ապահովվել է ներդպրոցական վերահսկողության սուբյեկտների վերահսկող և վերահսկվող փորձարկվողների թվով և ատենախոսի անձնական ներդրմամբ, փորձարարական աշխատանքի երկարաժամկետ տևողությամբ:

Հետազոտության փորձաքննությունը. ստացված արդյունքները քննարկվել են փորձարկված դպրոցների, այդ թվում նաև մեր ղեկավարած Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 2 դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերում: Հետազոտության արդյունքներով հրապարակել ենք գիտական հոդվածներ:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

- Ներդպրոցական վերահսկողության կատարելագործման արդյունավետությունը պայմանավորված է մի կողմից տարիների ընթացքում հանրակրթական դպրոցներում կուտակած դրական փորձի ուսումնասիրությամբ ու ընդհանրացմամբ, մյուս կողմից այն նորի հայտնաբերմամբ, ձևավորմամբ ու ստեղծմամբ, որոնք իրենց հետ բերում են ժամանակի հրամայականն ու հանրակրթական դպրոցի բարեփոխումները:
- Ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների կատարելագործումը անվերապահ նպաստում է սովորողների ուսման որակի արդյունավետ վերահսկմանը և դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
- Ներդպրոցական վերահսկողության կատարելագործման նոր ուղիների ու միջոցների որոնումը հնարավորություն է տալիս անթերի կատարել պետության կողմից դպրոցին իջեցված սոցիալական պատվերը, որի լուծումը կապված է ներդպրոցական վերահսկողության էության, առանձնահատկությունների, նպատակի, խնդիրների, գործառույթների արդիականացման, ներդպրոցական վերահսկողության կատարելագործման հետ:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 173 էջ, որն իր մեջ ընդգրկում է 14 աղյուսակ, 2 գծապատկեր և 2 դիագրամ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ տրված է հետազոտության **արդիականությունը**, բացահայտված են **նպատակն ու խնդիրները**, ցույց են տրված **օբյեկտն ու առարկան,** ներկայացված են **գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը**, **կիրառված մեթոդները, կատարման փուլերը**, հիմնավորված են **գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունները, հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացված դրույթները:**

Ատենախոսության **առաջին գլուխը** նվիրված է **«Հանրակրթական դպրոցի բարեփոխումների էությանը և ներդպրոցական վերահսկողության կատարելա-**

գործման անհրաժեշտությանը»: Գլխի երկու ենթագլուխներում քննարկման առարկա են դառնում.

- ներդպրոցական վերահսկողության տեսական հիմունքները և մեթոդաբանական նախադրյալները, և
- ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների որոնման անհրաժեշտության հարցերը:

Առաջին ենթագլխում խոսվել է ներդպրոցական վերահսկողության կատարելագործման համար հիմք հանդիսացող.

- վերահսկող ու վերահսկվող սուբյեկտների դաստիարակվածության ցածր մակարդակների,
- այդ սուբյեկտների քաղաքական մշակույթի անմխիթար վիճակի մասին:

Քննարկվել են.

- ներդպրոցական վերահսկողության բովանդակությունը, կառուցվածքն ու առանձնահատկությունները,
- ուսուցչի և ներդպրոցական վերահսկողության գծով վերահսկվող այլ սուբյեկտների մասնագիտական կոմպետենտության հարցերը,
- ներդպրոցական վերահսկողության տեսակներն ու ձևերը,
- տնօրինություն-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունների առանձնահատկութունները,
- ներդպրոցական վերահսկողության գործընթացում մանկավարժական սուբյեկտների միջև առկա հակասությունների հարցերը:

Առանձնացվել են գիտական իմացության տեսության հիմնարար դրույթներից և ներդպրոցական վերահսկողության կատարելագործման անհրաժեշտությունից բխող ուղղությունները.

- կենդանի հայեցողությունը (փաստերի և երևույթների դիտումը),
- փաստերի ու երևույթների տրամաբանական մշակումը,
- ներդպրոցական վերահսկողության առջև ծառացած խնդիրների լուծումը (օպտիմալ տարբերակների առաջադրումը, արդյունքների վերլուծությունը, ամփոփումը):

Ամենայն մանրամասնությամբ և մեթոդաբանական խորը վերլուծություններով տրված են ներդպրոցական վերահսկողության հարցերի կառուցվածքային, գործառույթային և արժեբանական տեսանկյունները:

Երկրորդ ենթագլխում արծարծված են ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների որոնման, հայտնաբերման ու ձևավորման անհրաժեշտության հարցերը: Մենք դա կապում ենք

- կրթական հաստատության առջև դրված նպատակի ու խնդիրների թերի կատարման,
- կրթության և հատկապես նրա կառավարման նկատմամբ միասնական քաղաքականության բացակայության,
- կրթության արդյունքների՝ գնահատման չափորոշիչների պակասի,
- մանկավարժների և աշակերտների միջև գոյություն ունեցող հարաբերությունների հստակ տարբերակման հետ:

Իսկ այս հարցերի լուծումը մենք տեսնում ենք՝

- կրթության բովանդակության և նրա անընդհատ փոփոխվող սահմանների որոշման ու ճշտման չափորոշիչների ստեղծման,
- կրթության արդյունավետ կառավարման և նրա միջոցով ներդպրոցական վերահսկողության համար մանկավարժական, հոգեբանական, սոցիալական, բարոյագիտական համապատասխան դաշտի ստեղծման,
- ներդպրոցական վերահսկողության դիդակտիկացման մեջ:

Ատենախոսության այս ենթագլխում ներկայացվում են ներդպրոցական վերահսկողության միջոցով մանկավարժության սուբյեկտների վերահսկող ու վերահսկվող փոխհարաբերությունները **կարգավորող գործառույթները**:

Միաժամանակ ներկայացվում են ներդպրոցական վերահսկողության շրջանակներում աշակերտական ինքնավարության գծով մանկավարժական հմուտ ղեկավարման պայմաններում լուծվող հարցերը, որոնք ենթարկվում են մանրամասն վերլուծության:

Գլուխն ավարտվում է ներդպրոցական վերահսկողության կատարելագործման գծով բարեփոխումների համար անհրաժեշտ մոտեցումների առանձնացմամբ ու վերլուծմամբ: Դրանք համարում ենք՝

- մանկավարժության սուբյեկտների միջև վերադասության և ստորադասության հարաբերությունները համագործակցային հարաբերություններով փոխարինելը,
- ղեկավարման և վերահսկման ավտորիտար, լիբերալ և ժողովրդավար ոճերը ներդաշնակելը,
- ներդպրոցական վերահսկողության առանձին բաղադրամասերը ենթահամակարգերի ամբողջություն դիտելը,
- ներդպրոցական վերահսկողության ոլորտում ուսուցման և դաստիարակության գործընթացներին ամբողջության մեջ հատուկ ուշադրության արժանացնելը,
- ներդպրոցական վերահսկողության՝ պլանավորման, կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, հաղորդակցման, որոշումների ընդունման, վերլուծման, գործընթացի կարևորության գիտակցման, իմաստավորման, արդյունքների գնահատման ապահովումը, կադրերի ընտրության ճիշտ հաշվառումը:

Ատենախոսության երկրորդ՝ «Ներդպրոցական վերահսկողության ենթահամակարգերը, վերահսկողության տեսակներն ու ձևերը» գլխում քննարկվել են.

- Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում սովորողների ուսման որակի վերահսկողության առանձնահատկությունները,
- Դպրոցի մանկավարժական խորհրդի և առարկայական մեթոդմիավորումների գործառույթները,
- Դպրոցի տնօրենը որպես ներդպրոցական վերահսկողությունն իրականացնող գլխավոր սուբյեկտ,
- Դասարանի ղեկավարի աշխատանքի բաժինները և գործառույթները,
- Դպրոցի տնօրինության և ընտանիքի համագործակցությունը որպես ներդպրոցական վերահսկողության ձև

հարցերը:

Առաջին ենթագլխում անդրադառնալով ներդպրոցական վերահսկողության համար անհրաժեշտ, կարևոր ու անփոխարինելի միավորներին, որոնք կազմում են կրթության օրինաչափ ու դինամիկ փոփոխվող համակարգի տարրերը և ներդպրոցական վերահսկողության սուբյեկտները, առանձնացվել է վերափոխման գործընթացում նրանց ունեցած սոցիալական դերերն ու սոցիալական կարգավիճակները: Որպես այդպիսիք նկատի են առնվել.

- **Դպրոցի տնօրենը,** որի դերը կարևորվում է նրանով, որ նա
  - օգնում է ուսուցիչներին նրանց եղած տարաբնույթ տեսակետները մի հարթություն տեղափոխելու հարցում,
  - ուսուցիչներին տեղեկատվություն է հաղորդում, բացատրում, թե բարեփոխումների արդյունքում ինչ է ակնկալվում,
  - ուսուցիչներին ներգրավում ու մասնակից է դարձնում բարեփոխումներին, ներդպրոցական վերահսկողության կատարելագործմանը, օգնում է կատարելագործման ուղիների ու միջոցների որոնման ու ներդրման գծով հանգելու նոր գաղափարների:
- **Դպրոցի ուսուցիչը**, որը որպես տնօրենի կողմից վերահսկվող և աշակերտների նկատմամբ վերահսկող սուբյեկտ, մասնագիտական իմաստով իր մեջ ներառում է.
  - մասնագիտական գիտելիքները, մասնագիտական կարողություններն ու հմտությունները, մասնագիտական փորձը և անձնական նվիրումը,
  - ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների որոնման հայտնաբերման, ձևավորման ու նորի ներդրման գիտակցումը, իմաստավորումը և գնահատումը,
  - ներդպրոցական վերահսկողության գծով բարեփոխումների գործում նոր գաղափարներն ու թարմ մտքերը դպրոց և ուսումնադաստիարակչական գործընթաց ներմուծելու մեջ համոզվածությունը:

Ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների որոնման հայտնաբերման, ձևավորման ու նորի ներդրման արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ

- կատարելագործումը բերի ներդպրոցական վերահսկողության կազմակերպման նոր լուծում
- դրանց ներդրումը ներդպրոցական վերահսկողությանը տա նոր որակ,
- այն դառնա ներդպրոցական վերահսկողության համակարգի որակական մի վիճակից մեկ այլ նոր ու արդյունավետ վիճակի անցման գործընթաց:

Երկրորդ ենթագլխում քննության է առնված դպրոցի **մանկավարժական խորհրդի և առարկայական մեթոդմիավորումների գործառույթները** և շեշտվում, որ դրանք միտված են ներդպրոցական վերահսկողության, այդ կոլեկտիվ ենթահամակարգերի և դպրոցի ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությանը: Մասնավորեցված են.

- մանկավարժական խորհրդի բովանդակությունը,
- մանկավարժական խորհրդի գործունեության կազմակերպման ու անցկացման փուլերը: Այն է.
  - դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մեկ ուսում-

նական տարվա պլանավորումը,
- մանկավարժական խորհրդի նիստերի կանոնավոր ու հաջորդական նախապատրաստումը,
- մանկավարժական խորհրդի նիստերի պարբերաբար անցկացումը,
- ընդունված որոշումների հետևողական կատարումը:

Ներկայացված են մանկավարժական խորհրդի գործունեության կազմակերպման մեթոդները, միջոցներն ու ձևերը, մանրամասնում դրանք՝ **բանավեճի, իլյուստրացիայի և դեմոնստրացիայի, դիդակտիկայի այլ ձևերի տեսքով**: Ցույց են տրված մանկավարժական խորհրդի նիստերի օրինակներ, մեր կողմից նորացված մեթոդներով, միջոցներով, աշխատանքների կազմակերպման ձևերով:

Ենթագլխի երկրորդ մասը առարկայական մեթոդմիավորումների գործունեության ներկայացումն է իր բովանդակությամբ.

- ուսումնական առարկայի, նրա դասավանդման մեթոդիկայի, նորագույն տեխնոլոգիաների կիրառման հետ ծանոթացումներով ու քննարկմամբ,
- իրենց մանկավարժական գործունեության մասին ուսուցիչների հաղորդումներով,
- փոխադարձ դասալսումների անցկացումներով,
- կրթական չափորոշիչների տեղայնացումով:

Ներկայացված և մանրամասն վերլուծված են առարկայական մեթոդ միավորումների գործառույթները՝

- ուսուցիչներին արդյունավետ, փոխներգործող մեթոդներով, մեթոդական հնարներով ու միջոցներով զինումը,
- մանկավարժական առաջավոր փորձի ներդրումը,
- սովորողների գիտելիքների որակի վերահսկումը:

Շարադրված են այն **պահանջները**, որոնք ըստ մեզ պետք է ներկայացվեն առարկայական մեթոդմիավորումներին՝ **«բաց»** կամ **«օրինակելի»** դասեր կազմակերպելու և անցկացնելու, լավագույն և փորձառու ուսուցիչների մանկավարժական վարպետությունը ի ցույց դնելու, երիտասարդ ու սկսնակ, օգնության կարիք ունեցող ուսուցիչներին՝ «ինչպես ուսուցանելը», «ինչպես դաստիարակելը», ուսուցման փոխներգործող՝ ինտերակտիվ մեթոդները ինչպես կիրառելը» սովորեցնելու միջոցներով ու ձևերով:

Կարևորություն է տրվում **ուսուցչի ինքնակրթության** կազմակերպմանը, մանկավարժական վարպետության բովանդակության հարստացմանը: Ատենախոսության մեջ շեշտը դրվել է.

- համապատասխան մասնագիտական գիտելիքներ ունենալու,
- մասնագիտական կարողությունների և հմտությունների տիրապետելու,
- մասնագիտական փորձ ձեռք բերելու,
- անձնական նվիրումի վրա:

Երրորդ ենթագլուխը նվիրել ենք **«դպրոցի տնօրենին, որպես ներդպրոցական վերահսկողությունն իրականացնող գլխավոր սուբյեկտ»:**

Շարադրված է դպրոցի տնօրենի պատասխանատվության բովանդակությունը, առանձնացվել են «կառավարում» և «ղեկավարում» հասկացությունների որակները, նշվել է, թե.

- եթե ղեկավարումը արվեստ է, ապա կառավարումը՝ գիտություն,
- եթե ղեկավարումը քաղաքականություն է, ապա կառավարումը՝ իրագործում,
- եթե ղեկավարումը ընդհանրացում է, ապա կառավարումը՝ մասնակիացում,
- եթե ղեկավարումը ռազմավարություն է, ապա կառավարումը՝ մարտավարություն,
- եթե ղեկավարումը փիլիսոփայություն է, ապա կառավարումը՝ գործողություն,
- եթե ղեկավարումը որակ է, ապա կառավարումը՝ քանակ,
- եթե ղեկավարումը ռեֆլեկտիվ է, ապա կառավարումը՝ ակտիվ,
- եթե ղեկավարումը բանական է, ապա կառավարումը՝ նյութական,
- եթե ղեկավարումը արժեք է, ապա կառավարումը՝ փաստ:

Մեր աշխատանքում քննարկված է դպրոցի տնօրենի, որպես լիդերի, **գործառույթների «ախտորոշումը»,** նրա սոցիալական դերի և սոցիալական կարգավիճակի ներդաշնակման հարցերը: Կարծում ենք, որ դա կդառնա իրական, եթե մեր փորձարարական աշխատանքների հիմքի վրա

- պարզվի նրա սոցիալական կարգավիճակը, սոցիալական տեղն ու դերը, դրանց ներդաշնակման կարևորությունը ներդպրոցական վերահսկողության գործառույթների իրականացման գործընթացում,
- հստակեցվեն և առանձնացվեն դպրոցի տնօրենի աշխատանքի և հատկապես կառավարման ոճերը իրենց համապատասխան նպատակային կիրառմամբ,
- ներդպրոցական վերահսկողությունը դարձվի թիմային կառավարում,
- դպրոցի տնօրենը ձեռք բերի տեխնոլոգիական իրազեկություն և դառնա լիդեր:

Ապա ամենայն մանրամասնությամբ ներկայացրել ենք տնօրենի **«սոցիալական դերային» և «սոցիալական կարգավիճակային» առանձնահատկությունները** կետերով և համապատասխան չափանիշներով (ներկայացված է աղյուսակի տեսքով):

Ենթագլխի երկրորդ մասում բավական ընդարձակ, աղյուսակների տեսքով ներկայացված են տնօրենի, որպես ներդպրոցական վերահսկողության գլխավոր սուբյեկտի աշխատանքը.

- մանկավարժական կադրերի հետ, նրանց մասնագիտական որակավորման բարձրացման և
- հանրակրթական ծրագրերի կատարման վերահսկողության գծով:

Ներկայացվել են կառավարման և ներդպրոցական վերահսկողության համար դպրոցի տնօրենին անհրաժեշտ կարողությունները, որոնք հոգեբան ու սոցիոլոգ Բեննիսը անվանել է

- ուշադրության կառավարում,
- իմաստի կառավարում,
- վստահության կառավարում,
- ինքնակառավարում:

Ենթագլուխն ավարտվում է մեր, որպես դպրոցի տնօրենի, ներդպրոցական

վերահսկողության գծով առաջավոր փորձի ներկայացմամբ ու վերլուծմամբ (աշխատանքների բովանդակությունը, կատարման միջոցներն ու ձևերը արտահայտված են համապատասխան աղյուսակների տեսքով):

Չորրորդ ենթագլուխը «դասարանի ղեկավարն է իր աշխատանքի բաժիններով ու գործառույթներով», որտեղ մանրամասնորեն շարադրված և նորովի մոտեցումներով քննարկված են.

- դասարանի ղեկավարի առջև դրված դաստիարակչական խնդիրները և դրանց մեր ներկայացմամբ գործնական կիրառումները,
- դասարանի ղեկավարի կողմից վերահսկվող աշխատանքի բաժինների ունեցած դերի և նշանակության հարցերը, որոնք մենք համարում ենք.
  - աշակերտներին ուսումնասիրելը,
  - աշակերտների ծնողների հետ աշխատելը,
  - դասարանում կարգապահություն ապահովելն ու պահպանելը,
  - աշակերտական կոլեկտիվ ձևավորելը,
  - իր դասարանում դասավանդող ուսուցիչների հետ աշխատանքների համաձայնեցումը,
  - դասարանի դաստիարակչական աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը:

Ենթագլխում յուրաքանչյուր բաժնի գծով տրված են աշխատանքների բովանդակությունը և կատարման եղանակները: **Այսպես՝** ատենախոսության մեջ ներկայացված են աշակերտներին **ուսումնասիրելու մեր կողմից մշակված ու ներդրված տեխնոլոգիաները, ընտանեկան դաստիարակության արդյունավետության պայմանները,** աշակերտական **կոլեկտիվի ձևավորման ու զարգացման փուլերը, աշխատանքի պլանավորման ձևերը, տեսակներն ու միջոցները:**

Գլխի **հինգերորդ ենթագլխում** ընդգրկված են **«դպրոցի տնօրինության և ընտանիքի համագործակցության, որպես վերահսկողության ձևի»** հարցերը: Առանձնացվել են մեր կողմից ներկայացվող համապատասխան գործառույթները.

- ընտանիքներում ծնողների կողմից իրականացվող դաստիարակչական գործունեության արդյունքների վերահսկումը,
- դպրոցի և ընտանիքի կապի նոր ու հետաքրքիր ձևերի ստեղծումն ու ամրապնդումը,
- դպրոցի և ընտանիքի համատեղ աշխատանքի գիտական կազմակերպումը:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղիների ու միջոցների գործնական որոնումը» գլուխը իր մեջ ներառել է.

- ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղղությամբ իրականացված աշխատանքների բնութագրման,
- դասալսումների, որպես ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ապահովման և սովորողների գիտելիքների որակի վերահսկման միջոցի,
- գիտափորձի վերլուծության և ներդպրոցական վերահսկողության կատարելագործման գործընթացում արդյունքների ներդրման հարցերը:

Առաջին ենթագլխում խոսվել, վերլուծել և ներկայացրել ենք մեր կողմից ներդպրոցական վերահսկողության գծով նորացված գործառույթները.

- դպրոցի կառավարման նկատմամբ առաջ քաշած այժմեական և հեռահար պահանջների հայտնաբերումը,
- ներդպրոցական վերահսկողության հանդեպ պահանջների փոփոխության տեսանկյունից դպրոցում տիրող իրավիճակի մշտադիտարկման իրականացումը,
- հնարավոր վտանգների և բացասական դրսևորումների և դրանց՝ ներդպրոցական վերահսկողության վրա անցանկալի ազդեցությունը կանխարգելելու նպատակով մշտադիտարկման անցկացումը,
- կառավարչական խնդիրների լուծման բարենպաստ հնարավորությունների բացահայտումը,
- ներդպրոցական վերահսկողության նորովի նախագծումը և ենթահամակարգերի առանձնացումը,
- ներդպրոցական վերահսկողության սուբյեկտների փոխներգործության, նրանց պարտականությունների և իրավունքների կանոնակարգումը,
- ներդպրոցական վերահսկողության գծով նորամուծությունների յուրացումն ու կիրառումը,
- ներդպրոցական վերահսկողության հարցերի գծով հետազոտական և փորձարարական աշխատանքների կազմակերպումը,
- ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ուղղությամբ նոր տեխնոլոգիաների յուրացման խթանումը:

Ենթագլխում ներկայացված են այդ գործառույթների կիրառման արդյունավետությունն ապահովող համապատասխան պայմանները.

- փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտի ստեղծումը ներդպրոցական վերահսկողության սուբյեկտների միջև,
- փոխըմբռնման հաստատումը վերահսկող ու վերահսկվող սուբյեկտների միջև,
- վերահսկողության սուբյեկտների ինքնահսկողության և ինքնակարգավորվածության զարգացման խթանումը,
- ներդպրոցական վերահսկողության սուբյեկտների միջև ստեծված հնարավոր հոգեբանական պատնեշի հաղթահարումը:

Երկրորդ ենթագլուխը «դասալսումներն» են, որոնք քննարկվել են որպես **«ներդպրոցական վերահսկողության կատարելագործման ապահովման և սովորողների գիտելիքների որակի վերահսկման միջոց»:**

Ներկայացվել է տնօրինության կողմից ուսուցչի մոտ դասալսման, որպես վերահսկման միջոցի, նպատակները: Դրանք մենք համարում ենք.

- ուսուցչի կողմից դասին ներկայացվող պահանջների կատարման ստուգումը,
- ուսուցչի կողմից դասի առջև դրված նպատակի ստուգումը,
- վերահսկողների՝ տնօրենի, փոխտնօրենների, առարկայական մեթոդմիավորումների նախագահի կողմից դասալսումների համար իրենց կողմից առանձնացված նպատակի՝ ուսուցչի կողմից կատարման ստուգումը,

- մանկավարժական գործունեության գծով ուսուցչին մշտապես զգաստ պահելը, նրա մեջ աշխատանքային կարգապահություն սերմանելը, իր գործի նկատմամբ պատասխանատվություն դաստիարակելը:

Ենթագլխում խոսվում է դասալսմանը ներկայացվող համակարգված մոտեցման մասին պահանջվում է, որ ուսուցիչը իր դասը դարձնի.

- **գիտական**. այն սովորողներին ներկայացնի գիտության վերջին խոսքով, հիմնավորի հաղորդածը և աշակերտներին բերի գիտական եզրահանգման,
- **պրոբլեմային**. ստեղծի պրոբլեմային իրավիճակներ, դրանք լուծի աշակերտների միջոցով և հանգեցնի ընդհանուր եզրակացության,
- **համակարգված.** այն վերլուծի բազմակողմանիորեն մանկավարժական, հոգեբանական և դիդակտիկական բոլոր պայմանների հաշվառմամբ,
- **դաստիարակչական**. որտեղ ուսուցումը և գիտելիքների հաղորդումը դարձնի դաստիարակության միջոց,
- **ներառարկայական, միջառարկայական և միջգիտական կապերի ապահովման դաշտ,** այն դարձնելով հիմնախնդրի շարադրման, լուծման, դասավանդվող առարկայի դերի և նշանակության, եղած կապերի բացահայտման միջոց:

Դասալսման նպատակը համարում ենք՝ դասանյութի ուսումնասիրության միջոցով աշակերտների անձնավորության մեջ փոփոխություններ կատարելը և այդ հարցում տնօրենի կողմից ուսուցչին օգնելը:

Ենթագլխի վերջում աղյուսակների տեսքով ներկայացված են դասալումների արդյունավատությանը նպաստ բերող դպրոցական նորմատիվ փաստաթղթերի նմուշներ:

Երրորդ ենթագլուխը ամբողջովին **«գիտափորձի վերլուծությունն է, արդյունքների ներդրումը ներդպրոցական վերահսկողության կատարելագործման գործընթացում»:**

Կատարված հետազոտությունները և գիտափորձից ստացված տվյալները ցույց տվեցին, որ դպրոցում ներդպրոցական վերահսկողության իրականացման գործընթացը հիմնականում կրում է միակողմանի բնույթ և չի արտացոլում սուբյեկտների միջև իսկական փոխհարաբերությունների ներդաշնակությունը:

Գիտական հետազոտությունը և մանկավարժական գիտափորձը իրականացվել են մանկավարժական գիտական հետազոտության գործող և փոքր ինչ թարմացված մեթոդների կիրառմամբ, ժամանակակից դիդակտիկայի բոլոր պահանջներով: Ուսումնասիրել ենք.

- դպրոցի տնօրենների վերջին հինգ տարիների դասալսումները դպրոցի տարբեր աստիճաններում, համապատասխան նպատակներով,
- դպրոցի կառավարման հետ առընչվող օրենսդրական և նորմատիվ փաստաթղթեր, դասղեկական և մեթոդմիավորումների գործեր, մանկավարժական խորհուրդների նիստերի արձանագրություններ, վերահսկողության ոճեր,
- փորձարկվող դպրոցների տարածաշրջանի հարյուրավոր ընտանիքներ:

Անկետային հետազոտությունների և հարցացուցակների միջոցով ներդպրո-

ցական վերահսկողության սուբյեկտներին, ըստ սոցիալական կարգավիճակների, ուղղել ենք հարցեր, օբյեկտիվ պատասխանների ակնկալիքներով: Դրանք հասցեագրվել են.

- **դպրոցների տնօրեններին**, որպես ներդպրոցական վերահսկողության գլխավոր սուբյեկտների,
- **ուսուցիչներին**, որպես տնօրինության նկատմամբ վերահսկվող, աշակերտների նկատմամբ վերահսկող սուբյեկտների,
- **աշակերտներին**, որպես բոլոր կողմերից մշտապես վերահսկվող սուբյեկտների,
- **դասարանի ղեկավարներին**, որպես սոցիալական դերում և սոցիալական կարգավիճակում գտնվող սուբյեկտների,
- **առարկայական մեթոդմիավորումների նախագահներին**, որպես և վերահսկվող, և վերահսկող սուբյեկտների,
- **ծնողներին,** որպես միջանկյալ վերահսկողության մեջ գտնվող սուբյեկտների:

Հարցերի բազմազանությունը, տեսակները և բովանդակությունը ներկայացված է ատենախոսության մեջ սոցիոլոգիական սկզբունքներով, ինչպես նաև աղյուսակների տեսքով:

Ատենախոսության մեջ տրվել են սուբյեկտներին ուղղված հարցերի ամենաճշգրիտ պատասխանները և՛ քանակային, և՛ տոկոսային առումներով: Տրված է «Ներդպրոցական վերահսկողության համակարգի» գծապատկերը:



Ներդպրոցական վերահսկողության հիմնախնդրի շուրջ գիտահետազոտական ուսումնասիրությունների տեսական վերլուծությունը և մեր կողմից իրականացված գիտափորձի արդյունքները թույլ են տալիս հանգելու հետևյալ **եզրակա-**

ցությունների.

- Ներդպրոցական վերահսկողությունը մանկավարժական, հոգեբանական, դիդակտիկական, կազմակերպչական և ստեղծագործական գործընթաց է, որն ունի ամենօրյա կատարելագործման կարիք:
- Ներդպրոցական վերահսկողությունը տարբեր, բայց իրար հետ կապված, իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող գործառույթների նպատակասլաց իրականացումն է, սովորողների ուսման որակի վերահսկման, դասղեկի ղեկավարությամբ աշակերտական ինքնավարության հաստատման, «դպրոց-ընտանիք» կապերի ամրապնդման ճանապարհին:
- Ներդպրոցական վերահսկողության կատարելագործումը նպաստում է արդյունավետ վերահսկողության պայմանների ստեղծմանը, սուբյեկտների կողմից վերահսկողության դերի գնահատմանը, նրանց միջև եղած հակասությունների հաղթահարմանը, ճանաչողական հնարավորությունների օգտագործման ուղիների ու միջոցների որոնմանը, հայտնաբերմանն ու ներդրմանը:
- Ներդպրոցական վերահսկողության կատարելագործման նոր ուղիների ու միջոցների որոնումը, հայտնաբերումը, ձևավորումը, մշակումն ու ներդրումը ճանապարհ է հարթում մանկավարժական ստեղծագործության համար և ապահովում է նորամուծության ներթափանցմանը:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Հակոբյան Ի.Պ.,** Ներդպրոցական վերահսկողության նկատմամբ դրսևորվող իրազեկ մոտեցումները դպրոցի կառավարման համակարգում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես (հասարակական գիտություններ), 2009թ., հ.3 (23), էջ 132-135:
2. **Հակոբյան Ի.Պ.,** Ներդպրոցական վերահսկողության գործառույթները դպրոցի կանոնակարգված գործունեության կառավարման համակարգում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես (հասարակական գիտություններ), 2009թ., հ.3 (23), էջ 136-138:
3. **Հակոբյան Ի.Պ.,** Դասարանի ղեկավարը ներդպրոցական կառավարման սուբյեկտ, Երևան, «Մանկավարժ» ամսագիր, 2010թ., հ.3, էջ 34-39:

АКОПЯН ИРА ПОГОСОВНА

ПУТИ И СРЕДСТАВА СОВЕРШЕНСТВОВАНИЯ ВНУТРИШКОЛЬНОГО УПРАВЛЕНИЯ ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЫ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. «Теория и история педагогики».

Защита состоится 17-ого октября 2013г. в 14:00 на заседании специализированного совета по педагогике 020 ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Внутришкольное управление как входящая в педагогический процесс, контролируемая и реализуемая функция со стороны определенного субьекта, организуется и применяется по специальной системе. Исходя из тенденций развития школы и образования на современном этапе особое значение уделяется умственному развитию учащихся, выявлению и углублению их умений. Но иногда все еще приходится осиливать устаревшие принципы, методы, формы и стили управления и контроля, перешедшие к нам из традиционной педагогики. С этой позиции приобретает определенную значимость неотложная реализация творческого сотрудничества между субьектами внутришкольного управления, т. е. контролирующими и контролируемыми, путем внедрения новых средств и методов совершенствования данного процесса повышения его эффективности. Выявление, формирование, развитие и целенаправленное и эффективное применение новых средств и методов совершенствования внутришкольного управления послужило основой для осознанного выбора темы исследования и обусловило ее актуальность.

Цель исследования. Выявление, формирование, развитие, эффективное и целенаправленное применение в общеобразовательной школе средств и путей совершенствования внутришкольного управления.

Задачи исследования

1. Определить функции субьектов внутришкольного управления, повысив качество контроля знаний учащихся.

2. Локализовать зарубежный передовой педагогический опыт управления школой и внутришкольного контроля, внедрить его в школьную практику, способствуя совершенствованию данного процесса.
3. Переработать и совершенствовать существующую и действующую систему средств и путей внутришкольного контроля.
4. Выявить обьективные и субьективные факторы, которые обеспечивают и обусловливают эффективность внутришкольного контроля и управления в условиях демократизации и гуманизации системы образования в процессе реформирования общего образования.

Научная новизна исследования:

1. В результате поиска и исследования путей и средств совершенствования системы внутришкольного управления и контроля, она определена как постоянно движущаяся, совершенствующаяся и самостоятельная педагогическая система.
2. Систематизированы формы и содержание контроля со стороны главного субьекта внутришкольного управления, директора школы, путем прослушиваний, а также гармонизации социальной роли, статуса, личностных и профессиональных качеств учителя.
3. Определены и выделены функции и условия совершенствования эффективности внутришкольного контроля, охарактеризованы их особенности.

Теоретическая значимость исследования:

- Процесс внутришкольного контроля рассматривается как важнейшая функция системы управления.
- Выявлена и новаторски интерпретирована роль внутришкольного контроля для совершенствования учебновоспитательной деятельности школы.

Практическая значимость исследования состоит в том, что разработанная в диссертации система путей и средств апробирована и внедрена в процесс реализации внутришкольного контроля школ N 2 им. Х. Абовяна , N 63 им.Г. Агаяна, N 190 им. Гюлбенкяна в г. Ереване и школы N24 им. Г. Чауша в г. Ванадзор.

Структура и обьем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложения. Обьем диссертации 173 страницы набранного текста, в котором 14 таблиц, 2 схемы и 2 диаграммы.

IRA POGOS HAKOBYAN

WAYS AND MEANS OF IMPROVING THE COMPREHENSIVE SCHOOL MANEGEMENT AT THE PRESENT STAGE

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01.- "Theory and History of Pedagogy".

The thesis defence will take place on October 17 2013, at 14:00. at the meeting of the specialized pedagogical committee 020 HAC. for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (address: 17 Tigran Mets street, 0010 Yerevan, Armenia).

SUMMARY

The relevance of the research. Intraschool management, as a member of the teaching process, kontraliruemaya and realized function of the subject's specific, organized and applied for a special system. Based on the trends in schools and education at the present stage of special importance is attached to the mental development of students, to identify and deepen their skills. But sometimes it still has osilivat outdated principles, methods, forms and styles of management and control that have fallen to us from traditional pedagogy. From this position takes on particular significance urgent implementation of creative cooperation between the subject intraschool management, ie is controlling and controlled through the introduction of new tools and methods for improving the process and raise its efficiency. Identification, formation, development and purposeful and effective use of new tools and methods for improving the management of intra served as the basis for an informed choice of the research topic and explains its relevance.

The aim of the research identification, formation, development, efficient and targeted use of resources in a comprehensive school and ways to improve the management of intra .

The objectives of the research are as follows

1. Determine the function of intra subjects of management , improving the quality control of students.

2. Locate foreign advanced pedagogical experience in school management and control of intra and introduce it into classroom practice, by promoting the improvement of the process.

3. Pererazrabotat and improve the existing and the current system and ways of intra The funds control.

4. Identify the objective and Subjective factors that enable and cause the efficiency of intra and control, in terms of democratization and humanization of the education system in the reform of general education.

The Scientific novelty of the research.

- A search and explore ways and means to improve the system of intra management and control, it is defined as a constantly moving, perfection and self-teaching system.

- Systematized form and content of the control of the main subject's intraschool, the Director of the school, through the auditions, as well as the harmonization of social roles, status, personal and professional qualities of a teacher.

- Identify and highlight the features and terms of improving the efficiency of intra control , characterized by their features.

The theoretical value of the research lies in the fact that .

- The process of intra control is considered as the most important function of the control system.

- Spotted and innovatively interpreted the role of intra uchebnovospitatelnoy control to improve the school's activities.

The Practical value of the research is that the system is designed in the thesis of ways and means of the tested and introduced in the process of monitoring the implementation of intra school N 2 them. Abovyan, N 63 im.G. Aghayan, N 190 to them. Gyulbenkyan in Yerevan school N24 them. G. Chaush in Vanadzor.

Structure and volume thesis. The thesis consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and appendices. Volume 173 page dissertation typed text, in which 14 tables, 2 charts and diagrams 2.